ՊԱՇՏՈՆ	Խոշոր բիզնեսի բաժնի գլխավոր մենեջեր
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Մշտական
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	24/05/2024թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ փնտրում է մոտիվացված թեկնածուի Խոշոր բիզնեսի բաժնի գլխավոր մենեջերի հաստիքը զբաղեցնելու համար, ով պատասխանատվություն է կրելու ինչպես նոր, այնպես էլ այնպես էլ գործող Խոշոր հաճախորդների գծով գործնական հարաբերությունների ստեղծման, պահպանման ու զարգացման, նրանց պահանջների բացահայտման, խորհրդատվության տրամադրման և Բանկում գործող բոլոր կորպորատիվ պրոդուկտների ու ծառայությունների վաճառքի իրականացման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Խոշոր հաճախորդների ներգրավում:
- Խոշոր հաճախորդների ներգրավման տվյալների բազաների վարում:
- Պասիվային պրոդուկտների գծով կորպորատիվ վաճառքների իրականացում:
- Ակտիվային պրոդուկտների գծով կորպորատիվ վաճառքների իրականացում:
- Ընթացիկ Խոշոր հաճախորդների պորտֆելի սպասարկում և խորհրդատվության տրամադրում:
- Խոշոր հաճախորդի գծով ինտեգրալ եկամտաբերության հաշվարկի (օրինակ՝ տրամադրվելիք վարկից, փոխանցումներից, ՊՈՍ տերմինալից, հաշիվներից և այլնից ստացվող եկամուտները հաշվի առնելով) իրականացում:
- Վարկային ռեգիստրից հարցումների իրականացում՝ համաձայն ներքին և նորմատիվ իրավական ակտերի:
- Խոշոր հաճախորդներից ֆինանսական տվյալների հավաքագրում, իրավաբանական փաթեթի հավաքագրում, գրավի գնահատման կազմակերպում, այլ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում և վարկային փաթեթի ամբողջական ամփոփում ու փոխանցում Վարկավորման վարչության համապատասխան աշխատակցին
- Վարկային հայտերի ներկայացում համապատասխան իրավասու մարմնի քննարկմանը
- Բանկի այլ ստորաբաժանումների հետ ակտիվ համագործակցություն կորպորատիվ հաճախորդների որակյալ սպասարկում և Վարկավորման վարչության գծով սահմանված թիրախային ցուցանիշները ապահովելու նպատակով
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ:
- Մասնակցում է Խոշոր բիզնեսի բաժնի զարգացման, նոր աշխատակիցների ուսուցմանը և կայացմանը, աջակցում է Խոշոր բիզնեսի բաժնի ղեկավարին թիմի առջև դրված թիրախների հաղթահարման գործընթացում

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Աշխատանքային փորձ՝ նվազագույնը 2 տարի բանկային համակարգում
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն,
- Բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ

- Լեզուների իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Խաչաձև վաճառքի հմտություններ
- Ընդհանուր զարգացվածություն
- Կազմակերպչական հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/